

Բջջագենետիկա առարկայի անոտագիա

Դասընթացի նպատակը՝ քրոմոսոմների և բջջի կորիզի կառուցվածքի և գործունեության ուսումնասիրությունն նորմայում և պաթոլոգիայի ժամանակ և ծանոթացում բջջագենետիկայի ժամանակակից մեթոդներին:

Դասընթացը յուրացնելու արդյունքում ուսանողները.

կտիրապետեն՝ քրոմոսոմների կառուցվածքի և գործունեության, ինչպես նաև քրոմոսոմային խաթարումների վերլուծության ոլորտում բջջագենետիկայի ժամանակակից նվաճումներին, ֆլուորեսցենտային *in situ* հիբրիդացման սկզբունքներին, մոլեկուլային բջջագենետիկայի մեթոդների կիրառությանը կլինիկական ախտորոշման, բջջաթունաբանության և էվոլյուցիայի ուսումնասիրության մեջ:

կկարողանան՝ իրականացնել գիտական հետազոտություններ՝ օգտագործելով բջջագենետիկ մեթոդներ, վերլուծել գրականությունը և էլեկտրոնային լրատվամիջոցները, վերլուծել, իրականացնել վիճակագրական մշակում և ձևակերպել փորձարարական ուսումնասիրությունների արդյունքները:

կտիրապետեն՝ քրոմոսոմային պատրաստուկներ պատրաստելու և քրոմոսոմների ներկման մեթոդներին, մանրադիտակով ստացված պատկերների վերլուծությանը, քրոմոսոմային շեղումների ուսումնասիրությանը դասական և մոլեկուլային-բջջագենետիկական մեթոդներով վերլուծելու հմտություններին, պատկերների վերլուծության ծրագրերին (Ikaros Karyotyping System/ MetaSystems):